«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1, հեռ.՝ (+374-60) 71-01-31, ներքին՝ 11-31, էլհասցե՝ www.ysu.am, board@ysu.am

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2026 թ. օգոստոսի 13-ին հարցման կարգով անցկացված թիվ 1 նիստի

ք. Երևան **14.08.2026 թ.**

2026 թվականի օգոստոսի 13-ին հարցման կարգով անցկացվել է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2026 թվականի թիվ 1 նիստը: Քվեարկությանը մասնակցել են 15 անդամներ (քվեաթերթիկները կցվում են):

Հարցման կարգով անցկացվող Խորհրդի նիստի օրակարգում ընդգրկված հարցերը հետևյալն են.

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի մրցութային ընտրության կազմակերպման ընթացակարգը» հաստատելու և 2020 թ. հունվարի 31-ին հաստատված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի մրցութային ընտրության կանոնակարգը» ուժը կորցրած ճանաչելու մասին որոշման ընդունում:

2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի բաց մրցութային ընտրության հայտարարում (հայտարարության տեքստի հաստատում):

3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2025 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 10-Լ որոշման հավելվածում (ԵՊՀ կառուցվածք) փոփոխությունները հաստատելու մասին որոշման ընդունում:

4. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2025 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 11-Լ որոշման հավելվածը (ԵՊՀ հաստիքացուցակ) նոր խմբագրությամբ հաստատելու մասին որոշման ընդունում:

5. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2025 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 12-Լ որոշման հավելվածում (ԵՊՀ 2025 թ. եկամուտների և ծախսերի նախահաշիվ՝ բյուջե) փոփոխություններ կատարելու մասին որոշման ընդունում:

6. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամին անհատույց օգտագործման իրավունքով հանձնված տարածքների (անշարժ գույքի) մի մասը վարձակալության տրամադրելու վերաբերյալ ռեկտորի առաջարկության հաստատում և ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե հայտի ներկայացում:

7. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կողմից կնքված՝ մեկ հարյուր միլիոն ՀՀ դրամի սահմանաչափը գերազանցող պայմանագրերի (այդ թվում՝ համաձայնագրերի, հավելվածների) հաստատում:

8. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2025 թվականի ֆինանսական գործունեության տարեկան հաշվետվության հաստատում և անկախ աուդիտորի եզրակացության ի գիտություն ընդունում:

9. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2026-2028 հաշվետու տարիների ֆինանսական աուդիտ իրականացնող իրավաբանական անձի ընտրության տեխնիկական բնութագրի հաստատում:

10. 2026-2027 ուսումնական տարում «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կրթական ծրագրերով ուսման վճարների չափի հաստատում:

11. 2027-2028 ուսումնական տարում «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կրթական ծրագրերով ուսման վճարների չափի հաստատում:

Օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ, հարցման կարգով անցկացված քվեարկության արդյունքները և ընդունված որոշումները.

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի մրցութային ընտրության կազմակերպման ընթացակարգը» հաստատելու և 2020 թ. հունվարի 31-ին հաստատված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի մրցութային ընտրության կանոնակարգը» ուժը կորցրած ճանաչելու մասին որոշման ընդունում:

Քվեարկության արդյունքները հետևյալն են. **կողմ՝ 15, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:**

Քվեարկության արդյունքներով ընդունվեց որոշում՝ հետևյալ բովանդակությամբ.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 43-րդ կետի 3-րդ և ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4-րդ կետի 2-րդ ենթակետերով՝ ԵՊՀ հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի մրցության ընտրության կազմակերպման ընթացակարգը»՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել 2020 թ. հունվարի 31-ին ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի հաստատած ««Երևանի պետական համալսարանի» ռեկտորի ընտրության կանոնակարգը» (փոփոխություններով և լրացումներով):
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի բաց մրցութային ընտրության հայտարարում (հայտարարության տեքստի հաստատում):

Քվեարկության արդյունքները հետևյալն են. **կողմ՝ 15, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:**

Քվեարկության արդյունքներով ընդունվեց որոշում՝ հետևյալ բովանդակությամբ.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի մրցութային ընտրության կազմակերպման ընթացակարգի» 4-րդ կետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 43-րդ կետի 3-րդ և ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4.-րդ կետի 2-րդ ենթակետերով, ԵՊՀ հոգաբարձուների խորհուրդը **որոշում է**.

1. ԵՊՀ ռեկտորի պաշտոնի համալրման նպատակով հայտարարել բաց մրցութային ընտրություն և հաստատել հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի քարտուղարին՝
1) հայտարարությունը հրապարակել ԵՊՀ պաշտոնական կայքով և առնվազն մեկ զանգվածային լրատվության միջոցով.
2) մրցութային ընտրությանը մասնակցելու վերաբերյալ դիմումների ու պահանջվող փաստաթղթերի ընդունման գործընթացը կազմակերպել ընթացակարգով և հայտարարությամբ սահմանված կարգով ու ժամկետներում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2025 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 10-Լ որոշման հավելվածում (ԵՊՀ կառուցվածք) փոփոխությունները հաստատելու մասին որոշման ընդունում:

Քվեարկության արդյունքները հետևյալն են. **կողմ՝ 15, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:**

Քվեարկության արդյունքներով ընդունվեց որոշում՝ հետևյալ բովանդակությամբ.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 43-րդ կետի 6-րդ, 49-րդ կետի 2-րդ և 57-րդ կետի 7-րդ ենթակետերով, ԵՊՀ հոգաբարձուների խորհուրդը **որոշում է.**

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից 2025 թվականի դեկտեմբերի 26-ին ընդունված թիվ 10-Լ որոշման հավելվածում (այսուհետ՝ հավելված) կատարվող հետևյալ փոփոխությունները.

1) Հիմք ընդունելով ԵՊՀ գիտական խորհրդի կողմից 2026 թվականի հունիսի 11-ին ընդունված թիվ 11/6 որոշմամբ ներկայացված առաջարկությունը՝ լուծարել ԵՊՀ-ի «Արտասահմանյան գրականության ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանումը և ուժը կորցրած ճանաչել հավելվածի 60.4.-րդ կետը:

2) Հիմք ընդունելով ԵՊՀ ռեկտորի առաջարկությունը՝

ա. լուծարել ԵՊՀ-ի «Էներգետիկ համակարգի շահագործման բաժին» կառուցվածքային ստորաբաժանումը և ուժը կորցրած ճանաչել հավելվածի 35-րդ կետը.

բ. լուծարել ԵՊՀ-ի «Հակահրդեհային ծառայություն» կառուցվածքային ստորաբաժանումը և ուժը կորցրած ճանաչել հավելվածի 37-րդ կետը.

գ. լուծարել ԵՊՀ-ի «Մեխանիկական արհեստանոց» կառուցվածքային ստորաբաժանումը և ուժը կորցրած ճանաչել հավելվածի 38-րդ կետը.

դ. լուծարել ԵՊՀ-ի «Տարածքի բարեկարգման և կանաչապատման բաժին» կառուցվածքային ստորաբաժանումը և ուժը կորցրած ճանաչել հավելվածի 39-րդ կետը.

ե. լուծարել ԵՊՀ-ի «Կաթսայատուն» կառուցվածքային ստորաբաժանումը և ուժը կորցրած ճանաչել հավելվածի 40-րդ կետը.

զ. լուծարել ԵՊՀ-ի «Տնտեսական գործունեության կազմակերպման և վերահսկման բաժին» կառուցվածքային ստորաբաժանումը, իր ենթաստորաբաժանումներով.

է. ստեղծել «Տնտեսական գործունեության կազմակերպման և վերահսկման վարչություն» կառուցվածքային ստորաբաժանումը, որի կազմում ստեղծել «Տեխնիկական սպասարկման բաժին» ու «Համակարգման և պլանավորման բաժին» կառուցվածքային ենթաստորաբաժանումները և հավելվածի 41-րդ կետը (ենթակետերով) փոփոխել ու շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«41. Տնտեսական գործունեության կազմակերպման և վերահսկման վարչություն

41.1. Տեխնիկական սպասարկման բաժին

41.2. Համակարգման և պլանավորման բաժին».

ը. «Հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանումը միացման ձևով վերակազմակերպել «Ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանման հետ և ուժը կորցրած ճանաչել հավելվածի 49.2-րդ կետը: Հավելվածի 49.1-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«49.1. Հայ գրականության և գրականության տեսության ամբիոն».

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

4. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2025 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 11-Լ որոշման հավելվածը (ԵՊՀ հաստիքացուցակ) նոր խմբագրությամբ հաստատելու մասին որոշման ընդունում:

Քվեարկության արդյունքները հետևյալն են. **կողմ՝ 15, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:**

Քվեարկության արդյունքներով ընդունվեց որոշում՝ հետևյալ բովանդակությամբ.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 43-րդ կետի 7-րդ և ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4-րդ կետի 6-րդ ենթակետերով՝ ԵՊՀ հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից 2025 թվականի դեկտեմբերի 26-ին ընդունված թիվ 11-Լ որոշման հավելվածը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

5. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2025 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 12-Լ որոշման հավելվածում (ԵՊՀ 2025 թ. եկամուտների և ծախսերի նախահաշիվ՝ բյուջե) փոփոխություններ կատարելու մասին որոշման ընդունում:

Քվեարկության արդյունքները հետևյալն են. **կողմ՝ 15, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:**

Քվեարկության արդյունքներով ընդունվեց որոշում՝ հետևյալ բովանդակությամբ.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 43-րդ կետի 8-րդ և ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4-րդ կետի 7-րդ ենթակետերով՝ ԵՊՀ հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից 2024 թվականի դեկտեմբերի 26-ին ընդունված թիվ 12-Լ որոշման հավելվածում կատարվող փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

6. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամին անհատույց օգտագործման իրավունքով հանձնված տարածքների (անշարժ գույքի) մի մասը վարձակալության տրամադրելու վերաբերյալ ռեկտորի առաջարկության հաստատում և ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե հայտի ներկայացում:

Քվեարկության արդյունքները հետևյալն են. **Կողմ՝ 15, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:**

Քվեարկության արդյունքներով ընդունվեց որոշում՝ հետևյալ բովանդակությամբ.

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի թիվ 914-Ն որոշմամբ հաստատված «Պետական ոչ առևտրային կազմակերպություններին, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին և հիմնադրամներին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության տրամադրման կարգի» 4-րդ և 8.1-րդ կետերի պահանջները և ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 43-րդ կետի 19-րդ և ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4-րդ կետի 18-րդ ենթակետերով՝ ԵՊՀ հոգաբարձուների խորհուրդը **որոշում է**.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կողմից վարձակալության նպատակով տրամադրվող տարածքների և այդ տարածքներում տեղադրվող սարքավորումների ցանկը՝ համաձայն Հավելված 1-ի:
2. աստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված գույքի մի մասի՝ բուժկետի տարածքների վարձակալության տրամադրման վերաբերյալ հայտը՝ համաձայն Հավելված 2-ի, և այն սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտե:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

7. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կողմից կնքված՝ մեկ հարյուր միլիոն ՀՀ դրամի սահմանաչափը գերազանցող պայմանագրերի (այդ թվում՝ համաձայնագրերի, հավելվածների) հաստատում:

Քվեարկության արդյունքները հետևյալն են. **կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2:**

Քվեարկության արդյունքներով ընդունվեց որոշում՝ հետևյալ բովանդակությամբ.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 43-րդ կետի 20-րդ ենթակետով՝ ԵՊՀ հոգաբարձուների խորհուրդը **որոշում է**.

1. Հաստատել՝

1) «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի և ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի միջև 29.12.2025 թ. կնքված գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրի իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին թիվ 10-3/26-S/YSU-CHEM, թիվ 10-3/26-S/YSU-BIOL, թիվ 10-

3/26-S/YSU-PHYS, թիվ 10-3/26-S/YSU-SOCIAL, թիվ 10-3/26-S/YSU-MATH, թիվ 10-3/26-S/YSU-ARMENOL պայմանագրերը.
2) «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի և ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի միջև 28.11.2025 թ. կնքված «Հայաստանի Հանրապետության գիտական համայնքին արտերկրի գիտնականների ինտեգրում – 2025/2» մրցույթի շրջանակում գիտական և գիտատեխնիկական գործունեության գիտական դրամաշնորհային ֆինանսավորման հետազոտական նախագծերի իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին թիվ 10-3/25IRF/2-1C002, թիվ 10-3/25IRF/2-1C003, թիվ 10-3/25IRF/2-1C007 պայմանագրերը.
3) «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի և ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի միջև 23.06.2025 թ. կնքված «Հեռավար լաբորատորիաների հիմնադրում - 2025» մրցույթի շրջանակում գիտական և գիտատեխնիկական գործունեության գիտական դրամաշնորհային ֆինանսավորման ծրագրերում հետազոտական նախագծերի իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին թիվ 10-3/25RL-1A040, թիվ 10-3/25RL-1E009, թիվ 10-3/25RL-5D031 պայմանագրերը.
4) «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի և «ԷՏԱԼՈՆ ԳՐՈՒՊ 20» ՍՊԸ-ի միջև 10.01.2025 թ. կնքված թիվ ԵՊՀ-ԲՄԱՇՁԲ-24/3 պայմանագրում 19.03.2026 թ. փոփոխություններ կատարելու մասին թիվ 4 համաձայնագիրը.
5) «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի և ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի միջև 02.03.2026 թ. կնքված հանձնարարության թիվ 09.06.01.26 պայմանագիրը.
6) «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի և ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի միջև 29.01.2026 թ. կնքված սուբսիդիայի տրամադրման թիվ 12004/10-3/2026 պայմանագիրը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

8. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2025 թվականի ֆինանսական գործունեության տարեկան հաշվետվության հաստատում և անկախ աուդիտորի եզրակացության ի գիտություն ընդունում:

Քվեարկության արդյունքները հետևյալն են. **կողմ՝ 15, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:**

Քվեարկության արդյունքներով ընդունվեց որոշում՝ հետևյալ բովանդակությամբ.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 43-րդ կետի 8-րդ և ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4-րդ կետի 7-րդ ենթակետերով՝ ԵՊՀ հոգաբարձուների խորհուրդը **որոշում է**.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2025 թվականի ֆինանսական գործունեության տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Ի գիտություն ընդունել անկախ աուդիտորի եզրակացությունը՝ ներկայացված հավելված 2-ում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

9. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2026-2028 հաշվետու տարիների ֆինանսական աուդիտ իրականացնող իրավաբանական անձի ընտրության տեխնիկական բնութագրի հաստատում:

Քվեարկության արդյունքները հետևյալն են. **կողմ՝ 15, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:**

Քվեարկության արդյունքներով ընդունվեց որոշում՝ հետևյալ բովանդակությամբ.

Ղեկավարվելով «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 9-րդ մասի 11-րդ կետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 43-րդ կետի 23-րդ ենթակետով, ԵՊՀ հոգաբարձուների խորհուրդը **որոշում է**.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2026-2028 հաշվետու տարիների ֆինանսական աուդիտ իրականացնող իրավաբանական անձի ընտրության տեխնիկական բնութագիրը և գնման հայտը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

10. 2026-2027 ուսումնական տարում «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կրթական ծրագրերով ուսման վճարների չափի հաստատում:

Քվեարկության արդյունքները հետևյալն են. **կողմ՝ 13, դեմ՝ 2, ձեռնպահ՝ 0:**

Քվեարկության արդյունքներով ընդունվեց որոշում՝ հետևյալ բովանդակությամբ.

Ղեկավարվելով «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 9-րդ մասի 13-րդ կետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 43-րդ կետի 23-րդ ենթակետով՝ ԵՊՀ հոգաբարձուների խորհուրդը **որոշում է**.

1. Հաստատել 2026-2027 ուսումնական տարում «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կրթական ծրագրերով ուսման վճարների չափը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

11. 2027-2028 ուսումնական տարում «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կրթական ծրագրերով ուսման վճարների չափի հաստատում:

Քվեարկության արդյունքները հետևյալն են. **կողմ՝ 12, դեմ՝ 2, ձեռնպահ՝ 1:**

Քվեարկության արդյունքներով ընդունվեց որոշում՝ հետևյալ բովանդակությամբ.

Ղեկավարվելով «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 9-րդ մասի 13-րդ կետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 43-րդ կետի 23-րդ ենթակետով՝ ԵՊՀ հոգաբարձուների խորհուրդը **որոշում է**.

1. Հաստատել 2027-2028 ուսումնական տարում «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կրթական ծրագրերով ուսման վճարների չաը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Խորհրդի նախագահ՝ **Ս. Պապիկյան**

Խորհրդի քարտուղար՝ **Հ. Քոչարյան**